

Ավանդական դարձած <<Առաջին զանգը>> մեծ շուքով նշվեց Օհանյան կրթահամալիրում: Կրթահամալիրը, որն իր անձանձիր, համառ և տքնաջան աշխատանքի շնորհիվ կարճ ժամանակում հասցրել է ձեռք բերել բարի համբավ հանրապետությունում, մեծ ոգևորությամբ էր նախապատրաստվել հանդիսությանը:

Հուզված էին ծնողները, տատիկները, պապիկները, որոնք դպրասեր մեր ժողովրդին բնորոշ ոգևորությամբ ու հուզմունքով հավաքվել էին իրենց սիրելի կրթօջախի բակում:



Հուզված էին մանկավարժները, որոնք կրթահամալիրի տնօրեն, հրաշալի մարդ և հմուտ մանկավարժ տիկին Օհանյանի ղեկավարությամբ Առաջին զանգի մոզական հնչյուններից <<ալեկոծված>> էին դիմավորում իրենց սաներին:

ՈՏրերորդ Առաջին զանգն էին դիմավորում նրանք, դժվար է ասել, բայց ասես առաջին անգամ լինեք...

Նրանք իրենց սաների աչքերում տեսնում էին աշխարհում <<ամենաանշնորհակալ>> համարվող մասնագիտության՝ Ուսուցչի աշխատանքի գնահատականը...

Նրանց սաների աչքերը լի էին երախտագիտության զգացումով՝ այդքան որակյալ ուսման և նվիրումի համար:

Հանդիսությանը իրենց ներկայությամբ պատվել էին Ավանի վարչական տարածքի ներկայացուցիչները, որոնք ընթերցեցին տարածքի ղեկավար պարոն Մանվել Ջավադյանի ուղերձը:

Միջոցառումը բացվեց կրթահամալիրի օրհներգով, որին հետևեցին օրվա առիթով հնչած ողջույնի խոսքերը:

## Սկիզբը՝ 1-ում

Կրթահամալիրի հիմնադիր պարոն Սուրեն Օհանյանը, ողջունելով ներկաներին պատմեց կրթահամալիրի որդեգրած ազգանպաստ առաքելության, կրթական ասպարեզում ունեցած ձեռքբերումների մասին:

Փաստեց, որ ծնող-ուսուցիչ դրական համագործակցությունն է միայն, որ տալիս է այսպիսի արդյունք: Այնուհետև օրվա առիթով հնչեցին ողջույնի խոսքեր (փոխտնօրեններ՝ Ս. Մարկոսյան, Ալ. Գրիգորյան):

Հանդիսավոր մասին հետևեց գեղարվեստական մասը և ոգևորությունը հասավ գագաթնակետին (ղեկավար՝ Արևիկ Օհանյան): Նկատելի էր նորությունը, թարմությունը, սովորականին, շաբլոնին չենթարկվելու համարձակությունը, որն էլ սովեց իր հիանալի արդյունքը: Երեխաների հիշողության մեջ անմոռաց մնաց իրենց փոքրիկ կյանքի ամենամեծ տոնը: Անկաշկանդ երգ ու պարից, զվարճալի խաղերից հետո փոքրիկները իրենց դասվարների ուղեկցությամբ գնացին իրենց դասասենյակները:

Ինքնատիպ էր միջին և ավագ դպրոցի սաների ելույթը (ղեկավար՝ Ս. Միսկարյան): Տոնական լինելուց բացի խիստ ուսանելի էր ու ժամանակակից. դասարանները բաժանվել էին թիմերի և մրցում էին: Յուրաքանչյուր թիմ ընտրում էր այն արժեքները, որոնցով պետք է առաջնորդվեր հետագայում, և հաղթելու էր իր ընտրած արժեքներին հավատարիմ մնացած թիմը:



Իսաղ մրցույթը ընթացավ մեծ ոգևորությամբ, վերջում ամփոփվեցին արդյունքները և <<Գիտելիքի օրը>> հաղթեց Գիտելիքը: